



ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

30 մայիսի 2023 թվականի

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան հետեւյալ կազմով՝ նախագահող՝ դատարանի նախագահ՝ Է. Վ. Չայրիյան, զեկուցող դատավոր՝ Կ. Լ. Չայկա, դատավորներ՝ Ա. Մ. Աժիբրաիմովա, Ժ. Ն. Բաիշել, Դ. Գ. Կոլոս, Տ. Ն. Նեշատաեւա, Վ. Խ. Սեյտիմովա, Գ. Ա. Սկրիպկինա, Ա. Է. Թոււմանյան, Ա. Ա. Ֆեդորցով,

դատական նիստի քարտուղար՝ Ն. Ս. Չեչենյովա,

ղեկավարվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 46-րդ, 47-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-75-րդ, 96-րդ, 98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի աշխատակարգի 72-րդ, 75-րդ, 85-րդ հոդվածներով,

տրամադրում է խորհրդատվական եզրակացություն՝ «Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման մասին» 2018 թվականի փետրվարի 2-ի համաձայնագրի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ նույնականացման միջոցներով առանձին ապրանքների դրոշմավորման սահմանումը նախատեսող որոշումների դրույթների պարզաբանման մասին Բելառուսի Հանրապետության արդարադատության նախարարության դիմումի հիման վրա:

I. Դիմողի հարցը

Բելառուսի Հանրապետության արդարադատության նախարարությունը (այսուհետ՝ Արդարադատության նախարարություն, դիմումատու) դիմել է

Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ «Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման մասին» 2018 թվականի փետրվարի 2-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ դրոշմավորման ազգային համակարգում նույնականացման միջոցներով ձեւավորման ժամանակ օգտագործված՝ դրոշմավորման ծածկագրի միայն մի մասի վերաբերյալ տեղեկատվության առկայության դեպքում Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ, Միություն) մեկ անդամ պետությունում թողարկված ապրանքները ԵԱՏՄ մեկ այլ անդամ պետությունում շրջանառության մեջ գտնվելու հնարավորության (անհնարինության) մասով դրույթների պարզաբանման մասին դիմումով:

Դիմումատուն, հիմնվելով Համաձայնագրի 1-ին հոդվածի՝ «դրոշմավորված ապրանքներ» եզրույթի սահմանումը պարունակող նորմի վրա, համարում է, որ տվյալ միջազգային պայմանագրի պահանջների անշեղ պահպանման նպատակով ընդունվել է Բելառուսի Հանրապետության Նախագահի 2011 թվականի հունիսի 10-ի «Ապրանքների դրոշմավորման մասին» թիվ 243 հրամանագիրը (2021 թվականի հունվարի 6-ի թիվ 9 հրամանագրի խմբագրությամբ): Դիմումատուն նշում է, որ Բելառուսի Հանրապետության Նախագահի հրամանագրին համապատասխան՝ ապրանքները համարվում են դրոշմավորված, եթե Բելառուսի Հանրապետության Նախարարների խորհրդի կամ դրա կողմից լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով դրանց կամ դրանց փաթեթվածքի վրա զետեղվել են նույնականացման միջոցներ, եւ դրոշմավորման համակարգում առկա են հավաստի տեղեկություններ՝ այդ ապրանքների, ինչպես նաեւ դրանց կամ դրանց փաթեթվածքի վրա զետեղված նույնականացման միջոցների վերաբերյալ: Դրոշմավորման համակարգին փոխանցված՝ ապրանքների վերաբերյալ տեղեկությունների անհամապատասխանությունը նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքներին նշանակում է, որ այդ ապրանքները համարվում են նույնականացման միջոցներով չդրոշմավորված:

Արդարադատության Նախարարությունը հղում է կատարում նաեւ նույնականացման միջոցներով առանձին ապրանքների դրոշմավորում սահմանելու վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ ԵՏՀ, Հանձնաժողով) խորհրդի որոշումների դրույթներին, որոնցով նախատեսվում է, որ ԵԱՏՄ երկու եւ ավելի անդամ պետությունների տարածքում ապրանքների

դրոշմավորում սահմանելու ամսաթվից դրանց կողմից ապահովվում է անդրսահմանային առևտրի շրջանակներում տեղափոխված ապրանքների վրա գետեղված նույնականացման միջոցների փոխադարձ ճանաչումը՝ պայմանով, որ համապատասխան նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկություններն այն անդամ պետության ազգային օպերատորի կողմից, որի տարածքից տեղափոխվել է դրոշմավորված ապրանքը, կփոխանցվեն այն անդամ պետության ազգային օպերատորին, որի տարածք մուտք է գործել դրոշմավորված ապրանքը: Դիմումատուի կարծիքով ԵՏՀ խորհրդի նշված որոշումներով նախատեսվում է, որ ապրանքների դրոշմավորման համար օգտագործվում է տվյալների չորս խումբ ներառող նույնականացման միջոց, իսկ կաթնամթերքի համար սահմանված է տվյալների երեք խմբի օգտագործում:

Արդարադատության նախարարությունը Դատարանի ուշադրությունը հրավիրում է այն փաստի վրա, որ անդամ պետությունների իրավասու մարմինների տեղեկատվական փոխգործակցության շրջանակներում տվյալների երկու խումբ (ստուգման բանալին եւ էլեկտրոնային ստորագրությունը) չի փոխանցվում անդրսահմանային տեղափոխման մասին տեղեկություններում: Կաթնամթերքի առնչությամբ անդրսահմանային տեղափոխման ժամանակ ստուգման ծածկագրի մասին տեղեկությունների փոխանցման անհրաժեշտությունը որոշվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Այդ կապակցությամբ, ինչպես նշում է դիմումատուն, Բելառուսի Հանրապետության՝ ապրանքների դրոշմավորման տեղեկատվական համակարգի ազգային բաղադրիչում (այսուհետ՝ ազգային բաղադրիչ) տեղեկատվություն է ստացվում ոչ թե նույնականացման միջոցների, այլ դրանց մի մասի վերաբերյալ: Շարադրվածը դիմումատուին հիմք է տալիս եզրակացնելու, որ Բելառուսի Հանրապետության տարածք տեղափոխված ապրանքները չեն կարող ճանաչվել որպես դրոշմավորված ապրանքներ, քանի որ դրանց մասով չեն պահպանվում Համաձայնագրի 1-ին հոդվածով նախատեսված՝ ազգային բաղադրիչում հավաստի տեղեկությունների առկայության վերաբերյալ պահանջները:

II. Ընթացակարգը Դատարանում

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) թիվ 2 հավելվածը հանդիսացող՝ Դատարանի ստատուտի (այսուհետ՝ Ստատուտ) 68-րդ կետի համաձայն՝ պարզաբանման գործերով քննության կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 101 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի աշխատակարգով (այսուհետ՝ Աշխատակարգ):

Գործը Աշխատակարգի 75-րդ հոդվածով սահմանված կարգով քննության համար նախապատրաստելու շրջանակներում Միության անդամ պետությունների լիազորված մարմիններ ուղարկվել են համապատասխան հարցումներ, եւ ստացվել են պատասխաններ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից, Բելառուսի Հանրապետության հարկերի եւ վճարների հարցերով նախարարությունից, Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանն առընթեր Պետական հարկային ծառայությունից, Ռուսաստանի Դաշնության արդյունաբերության եւ առեւտրի նախարարությունից:

Դատարանի հարցմամբ Հանձնաժողովի կողմից ներկայացվել են նախապատրաստական նյութեր՝ Համաձայնագրի եւ առանձին ապրանքների դրոշմավորման հարցերը կարգավորող՝ ԵՏՀ խորհրդի որոշումների առնչությամբ:

Մեծ կոլեգիան, իրականացնելով Միության իրավունքի պարզաբանումը, Ստատուտի 50-րդ կետին համապատասխան ղեկավարվում է «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի նորմերով, որի մասնակիցներն են բոլոր անդամ պետությունները, եւ մասնավորապես նշված Կոնվենցիայի 31-րդ հոդվածով, որի համաձայն միջազգային պայմանագիրը մեկնաբանվում է բարեխղճորեն՝ պայմանագրի եզրույթների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, հաշվի առնելով դրա նախաբանը եւ հավելվածները, ինչպես նաեւ պայմանագրի առարկայի եւ նպատակների լույսի ներքո:

III. Եզրահանգումներ

1. ԵԱՏՄ-ում ապրանքների դրոշմավորման իրավական կարգավորումն իրականացվում է Միության շրջանակներում միջազգային պայմանագիր

հանդիսացող՝ «Ապրանքները նույնականացման միջոցներով դրոշմավորելու մասին» համաձայնագրին համապատասխան, որով ապահովվում է նաև Պայմանագրի 3-րդ հոդվածով սահմանված՝ փոխշահավետ համագործակցության եւ բարեխիղճ մրցակցության մասով Միության գործունեության սկզբունքների իրագործումը:

Համաձայնագրի նախաբանի համաձայն՝ դրա նպատակն է ԵԱՏՄ-ի շրջանակներում ապրանքների օրինական շրջանառության ապահովումը, սպառողների իրավունքների պաշտպանությունը եւ նրանց մոլորեցնող գործողությունների կանխարգելումը: Համաձայնագրի՝ սպառողների իրավունքների պաշտպանությանն ուղղվածությունը համապատասխանում է տվյալ բնագավառում համաձայնեցված քաղաքականությունն իրականացնելու մասին պայմանագրի 61-րդ հոդվածին: ԵԱՏՄ-ի շրջանակներում ապրանքների ազատ տեղաշարժի եւ օրինական շրջանառության ապահովման համար Համաձայնագրով մշակվում են «Ապրանքների միասնական շուկա ձեւավորելու մասին» պայմանագրի 4-րդ հոդվածի եւ «Ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառումը Միությունում արգելելու մասին» պայմանագրի 28-րդ եւ 29-րդ հոդվածների նորմերը: Տվյալ եզրահանգումը հաստատվում է ««Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման մասին» 2018 թվականի փետրվարի 2-ի համաձայնագրի իրականացման ընթացքի եւ Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի հետագա զարգացման մասին» Եվրասիական միջկառավարական խորհրդի 2020 թվականի հուլիսի 17-ի թիվ 11 կարգադրության (այսուհետ՝ թիվ 11 կարգադրություն) նախաբանի դրույթներով, որով Համաձայնագրի կիրառումը կապվում է Պայմանագրի 28-րդ հոդվածի դրույթներին համապատասխան ապրանքների ազատ տեղաշարժի եւ ԵԱՏՄ տնտեսավարող սուբյեկտների համար հավասար պայմանների ստեղծման հետ:

Ելնելով շարադրվածից՝ Մեծ կոլեգիան հանգում է այն եզրակացությանը, որ Համաձայնագրի նորմերը եւ դրա հիման վրա ընդունված՝ ԵԱՏՄ մարմինների ակտերն անհրաժեշտ է մեկնաբանել թե՛ Միության ընդհանուր նպատակների եւ թե՛ Համաձայնագրի այն նպատակների լույսի ներքո, որոնք կոչված են ապահովելու ապրանքների ազատ տեղաշարժը՝ սպառողների իրավունքների պաշտպանության հետ մեկտեղ՝ չխոչընդոտելով ներքին շուկա ձեւավորելու նպատակի իրագործումը:

2. Համաձայնագրով սահմանվում է Միության շրջանակներում նույնականացման միասնականացված միջոցներով ապրանքների դրոշմավորման կարգը: Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դրա գործողությունը տարածվում է իրավաբանական անձանց եւ անհատ ձեռնարկատերերի վրա, որոնք իրականացնում են այն ապրանքների արտադրությունը եւ (կամ) շրջանառությունը, որոնց առնչությամբ ընդունվել է որոշում դրոշմավորում սահմանելու վերաբերյալ, այդ թվում՝ թողարկողների վրա: Համաձայնագրի 1-ին հոդվածում «թողարկող» ասելով հասկացվում են անդամ պետությունների գործադիր իշխանության մարմինները եւ նույնականացման միջոցների եւ (կամ) նույնականացման միջոցներ պարունակող նյութական կրիչների պատրաստում, գեներացում եւ (կամ) իրացում իրականացնող կազմակերպությունները:

Համաձայնագրի արդյունավետ իրագործումն ապահովելու նպատակներով թիվ 11 կարգադրությամբ Հանձնաժողովի խորհրդին հանձնարարվել է սահմանել դրոշմավորման համակարգի բազային տեխնոլոգիական կազմակերպական մոդելը, որով նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորում սահմանելիս կապահովվեն միասնականացված մոտեցումները: Անդամ պետություններին առաջարկվել է իրենց տարածքներում դրոշմավորում սահմանելիս կիրառել բազային մոդելը՝ Միության շուկայում դրոշմավորման ազգային համակարգերի տարբեր ստանդարտների հետ կապված խոչընդոտների առաջացումը թույլ չտալու նպատակով: Դրոշմավորման համակարգի բազային տեխնոլոգիական կազմակերպական մոդելը Միությունում սահմանվել է Հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի մարտի 5-ի «Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի բազային տեխնոլոգիական կազմակերպական մոդելի մասին» թիվ 19 որոշմանը (այսուհետ՝ թիվ 19 որոշում) համապատասխան: ԵՏՀ խորհրդի 2021 թվականի ապրիլի 23-ի «Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման դեպքում գաղտնագրային պաշտպանության միասնական մեխանիզմների մասին» թիվ 41 որոշման (այսուհետ՝ թիվ 41 որոշում) հիման վրա ԵԱՏՄ-ում սահմանվել են ապրանքների դրոշմավորման դեպքում գաղտնագրային պաշտպանության միասնական մեխանիզմներ:

Թիվ 41 որոշման 1-ին կետի «ա» եւ «բ» ենթակետերից հետեւում է, որ դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցների գաղտնագրային

պաշտպանության ապահովումը Միությունում իրականացվում է փուլ առ փուլ՝

- 2021 թվականի հուլիսի 1-ից 2026 թվականի օգոստոսի 1-ը նույնականացման միջոցների գաղտնագրային պաշտպանությունն անդամ պետություններն ապահովում են միջպետական ստանդարտներին համապատասխան, իսկ այդպիսի հնարավորության բացակայության դեպքում՝ անդամ պետությունների ազգային ստանդարտներին համապատասխան.

- 2026 թվականի օգոստոսի 1-ից Միությունում ապահովվում է նույնականացման միջոցների գաղտնագրային պաշտպանության միասնական եղանակների կիրառումը:

Թիվ 41 որոշման 1-ին կետի «ա» եւ «բ» ենթակետերի բովանդակությունը հիմք է ծառայում Մեծ կոլեգիայի այն եզրահանգման համար, որ սույն խորհրդատվական եզրակացությունը ներկայացնելու պահի դրությամբ Համաձայնագրի իրագործման գործընթացը չի ավարտվել, եւ մինչեւ 2026 թվականի օգոստոսի 1-ը գործում է անցումային ժամանակաշրջան, որի ընթացքում Միությունում նույնականացման միջոցների գաղտնագրային պաշտպանության միասնական եղանակներ չեն կիրառվում, ինչի հետ կապված գործում են միջպետական ստանդարտները, իսկ դրանց բացակայության դեպքում՝ անդամ պետությունների ազգային ստանդարտները:

3. Համաձայնագրի 1-ին հոդվածով սահմանվում է «դրոշմավորված ապրանքներ» հասկացությունը, եւ դրանք սահմանվում են որպես այնպիսի ապրանքներ, որոնց վրա զետեղված են նույնականացման միջոցներ՝ սահմանված պահանջների պահպանմամբ, եւ որոնց մասին հավաստի տեղեկությունները պարունակվում են ազգային բաղադրիչում: Տվյալ իրավական նորմի վերլուծությունը վկայում է այն մասին, որ դրոշմավորված ապրանքների շարքին դասվում են հետեւյալ երկու պայմաններին համապատասխանող ապրանքները՝ 1) դրանց վրա զետեղված են նույնականացման միջոցներ՝ սահմանված պահանջների պահպանմամբ, 2) ազգային բաղադրիչում պարունակվում են ապրանքների վերաբերյալ հավաստի տեղեկություններ: Ապրանքը որպես դրոշմավորված ապրանք ճանաչելու համար այլ պայմաններ նորմ հանդիսացող տվյալ սահմանման մեջ չեն պարունակվում: Հետեւաբար ներկայումս ապրանքի՝ որպես «դրոշմավորված ապրանք» կարգավիճակը պայմանավորված չէ նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկությունների՝ այն անդամ

պետության տեղեկատվական համակարգի ազգային բաղադրիչ փոխանցմամբ, որի տարածք տեղափոխվել է դրոշմավորված ապրանքը:

Համաձայնագրի 1-ին հոդվածի մեկնաբանման նկատմամբ այլ մոտեցում կնշանակի, որ միեւնույն ապրանքն անդամ պետություններում ունի տարբեր կարգավիճակներ, ինչը հակասում է Համաձայնագրի այնպիսի նպատակին, ինչպիսին է ապրանքների օրինական շրջանառության ապահովումը՝ ԵԱՏՄ ներքին շուկայում դրանց ազատ տեղաշարժի շրջանակներում: Համաձայնագրի 1-ին հոդվածին համապատասխան՝ «նույնականացման միջոց» ասելով հասկանում ենք պայմանանշանների մեքենաընթեռնելի եզակի հաջորդականություն, որը ներկայացված է սովերագծային ծածկագրի ձեւով կամ ձայնագրված է ռադիոհաճախականության պիտակի վրա կամ ներկայացված է ավտոմատ նույնականացման այլ միջոցի (տեխնոլոգիայի) օգտագործմամբ: Իր հերթին, Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի եւ 9-րդ հոդվածի, ինչպես նաեւ թիվ 19 որոշման 38-րդ, 42-րդ եւ 49-րդ կետերի համակարգային մեկնաբանումից հետեւում է, որ ազգային բաղադրիչն այն թողարկող պետության ապրանքների դրոշմավորման տեղեկատվական համակարգի բաղադրիչ է, որի տարածքում իրականացվել է համապատասխան ապրանքների դրոշմավորումը:

4. Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի խորհուրդը հաստատում է այն ապրանքների ցանկը, որոնք ենթակա են դրոշմավորման՝ ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան դրանց ծածկագրերի նշմամբ, եւ միաժամանակ սահմանում է անդամ պետությունների իրավասու մարմինների միջեւ եւ անդամ պետությունների իրավասու մարմինների ու Հանձնաժողովի միջեւ փոխանցվող՝ դրոշմավորված ապրանքների մասին տեղեկությունների ձեւաչափը, կազմը եւ կառուցվածքը, ինչպես նաեւ այդ տեղեկությունների փոխանցման ժամկետները:

Այդպիսով, Համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետից հետեւում է, որ այն տեղեկատվության կազմն ու կառուցվածքը, որը պետք է պարունակվի նույնականացման միջոցներում, ինչպես նաեւ անդամ պետությունների իրավասու մարմինների միջեւ եւ անդամ պետությունների իրավասու մարմինների ու Հանձնաժողովի միջեւ փոխանցվող՝ դրոշմավորված ապրանքների մասին

տեղեկությունների ձեռնարկը, կազմը եւ կառուցվածքը ԵՏՀ-ի կողմից սահմանվում են դրոշմավորման ենթակա ապրանքի յուրաքանչյուր տեսակի համար:

Համաձայնագրի 5-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված է, որ ազգային օրենսդրությանը համապատասխան դրոշմավորվող ապրանքների մասով Միության շրջանակներում ապրանքների դրոշմավորում սահմանվելու ամսաթվից անդամ պետություններն իրենց տարածքներում այդ ապրանքների դրոշմավորումն ապահովում են Միության իրավունքով նախատեսված կարգով:

Մեծ կոլեգիան հանգում է այն եզրակացությանը, որ որպես Միության իրավունքի ակտ՝ «Համաձայնագրի գերակայության սկզբունքի ուժով» նշանակում է, որ ապրանքը որպես դրոշմավորված ապրանք ճանաչելու չափորոշիչները պայմանավորված չեն այն փաստով՝ արդյո՞ք դրոշմավորումն իրականացվում է Միության, թե՛ առանձին անդամ պետությունների շրջանակներում:

5. Համաձայնագրի 7-րդ հոդվածի 4-րդ կետի հիման վրա ԵՏՀ խորհրդի կողմից ընդունված՝ առանձին ապրանքների դրոշմավորում սահմանելու վերաբերյալ որոշումները վկայում են այն մասին, որ Միության իրավունքում կիրառվում է տեղեկատվական փոխգործակցության մի քանի եղանակ, այդ թվում՝ նույնականացման միջոցների փոխադարձ ճանաչումը:

Հաշվի առնելով դիմումատուի հարցը՝ Մեծ կոլեգիան անհրաժեշտ է համարում անդրադառնալ ԵՏՀ խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Նույնականացման միջոցներով կաթնամթերքի առանձին տեսակների դրոշմավորում սահմանելու մասին» թիվ 129 որոշման (այսուհետ՝ «Կաթնամթերքի դրոշմավորման մասին» թիվ 129 որոշում) տեքստին: Նշված որոշման 2-րդ կետի 18-րդ պարբերությանը համապատասխան՝ երկու եւ ավելի անդամ պետությունների կողմից իրենց տարածքում ապրանքների դրոշմավորում սահմանելու ամսաթվից վերջինների կողմից ապահովվում է տվյալ որոշմանը համապատասխան ստեղծված նույնականացման միջոցների փոխադարձ ճանաչումը՝ արտահանող պետության ազգային օպերատորի կողմից ներմուծող պետության ազգային օպերատորին նույնականացման միջոցների մասին տեղեկությունների փոխանցման եւ անդամ պետությունների օրենսդրության պահանջներին համապատասխան՝ գաղտնագրային միջոցների օգտագործմամբ:

պաշտպանված նույնականացման միջոցների իսկությունը հաստատելու նպատակով՝ ազգային օպերատորների միջեւ տեղեկատվական փոխգործակցության կազմակերպման (գաղտնագրային պաշտպանության միասնական եղանակների բացակայության դեպքում) պայմանով:

«Կաթնամթերքի դրոշմավորման մասին» թիվ 129 որոշումը վկայում է այն մասին, որ տվյալ արտադրանքի համար սահմանվել է նույնականացման միջոցների փոխադարձ ճանաչման հատուկ ռեժիմ, որի համաձայն համապատասխան սկզբունքի գործողության համար սահմանվել է նույնականացման միջոցների մասին տեղեկությունների փոխանցման, ինչպես նաեւ նույնականացման միջոցների իսկությունը հաստատելու նպատակով ազգային օպերատորների միջեւ տեղեկատվական փոխգործակցության իրականացման պայման:

«Կաթնամթերքի դրոշմավորման մասին» թիվ 129 որոշման 2-րդ կետի համաձայն՝ նույնականացման միջոցը ներառում է տվյալների երեք խումբ՝ ապրանքի ծածկագիրը, դրա անհատական սերիական համարը եւ ստուգման ծածկագիրը: Ինչպես հետեւում է թիվ 19 որոշման 31-րդ կետից, ստուգման ծածկագիրը կոչված է ապահովելու նույնականացման ծածկագրի ամբողջականության եւ իսկության ստուգումը եւ մշակվում (հաշվարկվում) է օպերատորների կողմից:

«Կաթնամթերքի դրոշմավորման մասին» թիվ 129 որոշմամբ հաստատված՝ ԵԱՏՄ անդամ պետությունների իրավասու մարմինների միջեւ եւ անդամ պետությունների իրավասու մարմինների եւ ԵՏՀ-ի միջեւ փոխանցվող՝ դրոշմավորված ապրանքների մասին տեղեկությունների ձեւաչափին, կազմին ու կառուցվածքին ներկայացվող պահանջների 8-րդ աղյուսակի ուժով՝ ապրանքների անդրսահմանային տեղափոխման ժամանակ ստուգման ծածկագրի փոխանցման անհրաժեշտությունը սահմանվում է արտահանող հանդիսացող անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Մեծ կոլեգիան ելնում է այն փաստից, որ «Կաթնամթերքի դրոշմավորման մասին» թիվ 129 որոշմամբ նախատեսվում է տվյալների երկու խմբի պարտադիր փոխանցում եւ ստուգման ծածկագրի փոխանցում չի պահանջվում: Նմանատիպ տեղեկատվության փոխանցման հնարավորությունը կարգավորվում է թողարկող պետության օրենսդրությամբ: Տվյալ եզրահանգումը համաձայնեցվում է թիվ 19 որոշման հավելվածի 9-րդ կետի երկրորդ պարբերությամբ, 8-րդ աղյուսակով

սահմանված ընդհանուր կարգավորման հետ, որի համաձայն բանալու նույնականացուցչի եւ ստուգման ծածկագրի մասին տեղեկությունների փոխանցման անհրաժեշտությունը սահմանվում է թողարկող անդամ պետության օրենսդրությամբ:

«Կաթնամթերքի դրոշմավորման մասին» թիվ 129 որոշման վերլուծության հիման վրա Մեծ կոլեգիան համարում է, որ եթե ապրանքի անդրսահմանային տեղափոխման ժամանակ արտահանող պետության օրենսդրությամբ ստուգման ծածկագրի փոխանցում նախատեսված չէ, ապա ներմուծող պետության ազգային բաղադրիչում համապատասխան տեղեկատվության բացակայությունը չի ազդում նույնականացման միջոցների փոխադարձ ճանաչման վրա եւ համապատասխան ապրանքը չի զրկում Համաձայնագրի 1-ին հոդվածի իմաստով դրոշմավորված ապրանքի կարգավիճակից:

6. Մեծ կոլեգիան ենթադրում է, որ ապրանքների նույնականացման միջոցների փոխադարձ ճանաչումը Պայմանագրի 3-րդ հոդվածով նախատեսված փոխշահավետ բարեխիղճ համագործակցության սկզբունքի տարր է, ինչը հատուկ է Միության միասնական (ընդհանուր) շուկային: Տվյալ սկզբունքը բխում է «Ապրանքների ազատ տեղաշարժի եւ փոխադարձ առեւտրում ոչ սակագնային կարգավորման միջոցների՝ անդամ պետությունների կողմից կիրառման արգելքի մասին» պայմանագրի 25-րդ եւ 28-րդ հոդվածների փոխկապակցված ընթերցումից եւ արտահայտվում է այն փաստում, որ մեկ անդամ պետության տարածքում օրինական արտադրված եւ շրջանառության մեջ բացթողնված ապրանքները կարող են ազատ շրջանառվել մեկ այլ անդամ պետության տարածքում:

Մեծ կոլեգիան նշում է, որ նույնականացման միջոցների փոխադարձ ճանաչումը, որպես ապրանքների ազատ տեղաշարժի սկզբունքն իրագործող գործոն, ուղղված է ներքին շուկայում խոչընդոտների բացառմանը: Մաքսային մարմինների որոշումների փոխադարձ ճանաչման նկատմամբ համանման մոտեցում է շարադրված Բելառուսի Հանրապետության կողմից Պայմանագրի, Մաքսային միության մաքսային օրենսգրքի եւ «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների փոխադարձ վարչական օգնության մասին» համաձայնագրի պահպանման մասին Ռուսաստանի Դաշնության դիմումի հիման վրա թիվ C-2/16 գործի վերաբերյալ 2017 թվականի փետրվարի 21-ի որոշման մեջ: Այդպիսի հանգամանքներում Պայմանագրում ձեւակերպված՝ ապրանքների ազատ տեղաշարժի սկզբունքի ցանկացած բացառում՝ ուղղված Պայմանագրի 29-

րդ հողվածի 1-ին կետում թվարկված շահերի պաշտպանությանը կամ այնպիսի օրինական շահերի պաշտպանությանը, ինչպիսին է օրինակ՝ սպառողների իրավունքների պաշտպանությունը, ենթակա չէ լայն մեկնաբանման: Տվյալ մոտեցումը համաձայնեցվում է Պայմանագրի 29-րդ հողվածի 1-ին կետի դրույթների կիրառման մասին ԵՏՀ դիմումի հիման վրա թիվ P-3/17 գործով Դատարանի 2017 թվականի հոկտեմբերի 30-ի խորհրդատվական եզրակացության մեջ ամրագրված դիրքորոշման հետ:

7. Հաշվի առնելով շարադրվածը՝ Մեծ կոլեգիան հանգում է հետևյալ եզրակացությանը.

Ապրանքի՝ որպես «դրոշմավորված ապրանք» կարգավիճակը պայմանավորված չէ դրա նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկությունների՝ այն անդամ պետության ապրանքների դրոշմավորման տեղեկատվական համակարգի ազգային բաղադրիչ փոխանցմամբ, որի տարածք տեղափոխվել է համապատասխան ապրանքը:

Անդրսահմանային առևտրի ժամանակ նույնականացման միջոցների փոխադարձ ճանաչման ուժով՝ ներմուծող պետության համար իր տարածքում Միության իրավունքով չի նախատեսվում այն ապրանքների շրջանառությունը խոչընդոտելու հնարավորություն, որոնք Համաձայնագրին համապատասխան դրոշմավորվել են մեկ այլ անդամ պետության տարածքում, նույնիսկ իր մոտ դրոշմավորման ծածկագրի բաղադրիչների միայն մի մասի վերաբերյալ տեղեկատվության առկայության դեպքում:

IV. Եզրափակիչ դրույթներ

Սույն խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել դիմողին:

Խորհրդատվական եզրակացության տեքստը հրապարակել Դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախագահող՝

Է.Վ. Հայրիյան

Դատավորներ՝

Ա.Ս. Աժիբրաիմովա

Ժ.Ն. Բաիշել

Դ.Գ. Կոլոս

Տ.Ն. Նեշատաեւա

Վ.Խ. Սեյտիմովա

Գ.Ա. Սկրիպկինա

Ա.Է. Թումանյան

Ա.Ա. Ֆեդորցով

Կ.Լ. Չայկա